ՉԻՆԱՍՏԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

DOI: 10.52174/2579-2989_2025.1-33

Հիմնաբառեր. *Չինաստան, ագրարային, բնապահպանական, մարտահրավերներ, ձեռքբերումներ, տեխնիկական առաջընթաց*

Վերջին 30 տարիների ընթացքում Չինաստանի տնտեսությունը սրընթաց աճ է գրանցել: Մինչև 1978 թվականը տեղի բնակչության մեծ մասն ապրում էր բացարձակ աղքատության շեմից ցածր: Նույն թվականին երկիրը սկսեց բարեփոխել և բացել իր տնտեսությունը: Մեծ ուշադրություն դարձնելով շուկայական սկզբունքներին և տնտեսական գործունեության բազմազանությանը՝ Չինաստանի կառավարությունը սկսեց փնտրել գաղափարախոսական և փիլիսոփայական նոր գործիքներ, որոնք թույլ կտային ժողովրդի հետ խոսել ավելի հոգեհարազատ ու հասկանալի լեզվով: Այդ նպատակով երկրի ղեկավարությունը մասամբ հրաժարվեց կոմունիստական գաղափարախոսության դոգմաներից, նախընտրեց շուկայական տնտեսության և ազատ մրցակցության մոտեցումները և վերակենդանացրեց կոնֆուցիականության գաղափարները: Մասնավորապես՝ Չինաստանը մեծ բարեփոխման տարիներին բոլոր հասանելի միջոցներով ու ձևերով քարոզում էր քաղաքացու կոնֆուցիական հարգված գծերը: Դրանք ներառում են՝ սեր հայրենիքի հանդեպ, ծառայություն ժողովրդին, քրտնաջան աշխատանք, գիտության ձգտում, փոխօգնություն, ազնվություն, հաստատակամություն, օրենքին համապատասխան վարքագիծ: Արդյունքում մեծ թափով զարգացավ տնտեսությունը, և ամրապնդվեց Չինաստանի տեղն աշխարհում: Բոլոր կանխատեսումները վկայում են, որ զարգացման այս տեմպերի պարագայում 2030 թվականին Չինաստանն անվանական ՀՆԱ-ով առաջ կանցնի ԱՄՆ-ից և կդառնա աշխարհի ամենամեծ տնտեսությունը:

Սույն հոդվածում ներկայացվում են վերջին երեք դժվարին տասնամյակներին ագրարային և բնապահպանական ոլորտներում Չինաստանի աննախադեպ ձեռքբերումները:

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնօրենի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 170 գիտական հոդվածների, 21 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

https://orcid.org/0000-0002-3019-4075

Չինաստանի բնակչությունը 2024 թվականին կազմում էր մոտ 1,4 մլրդ մարդ, որը նախորդ տարվա համեմատությամբ պակասել էր 1,29 մլն-ով: Պաշտոնական վիճակագրության տվյալներով քաղաքային բնակչությունն ավելացել էր 1.1%-ով (943.5 մլն մարդ), իսկ գյուղական բնակչությունը՝ պակասել 2.5%-ով (464.8 մլն մարդ)[1]: Ժողովրդագրական այս փոփոխությունները հանգեցրին նրան, որ Չինաստանն աշխարհում բնակչության թվով առաջնությունը զիջեց Հնդկաստանին, բայց դա չազդեց տնտեսական առաջընթացի վրա: Ավելին, երկիրն ապահովեց կայուն զարգացում և մի շարք ցուցանիշներով աշխարհում զբաղեցրեց առաջին հորիզոնականը:

Ահավասիկ, Լոնդոնում գործող CEBR խորհրդատվական ընկերության կանխատեսումների համաձայն, 2030 թվականին Չինաստանն անվանական ՀՆԱ-ով առաջ կանցնի ԱՄՆ-ից և կդառնա աշխարհի ամենամեծ տնտեսությունը. «1990 թվակա նին Չինաստանի ՀՆԱ-ն կազմում էր 360,86 մլրդ դոլար, իսկ 2023 թվականի վերջին դա գերազանցեց 17,8 տրիլիոն դոլարը: Այսինքն՝ 33 տարում երկրի տնտեսությունն աճել է 49 անգամ: Նույն ժամանակահատվածում ԱՄՆ-ի ՀՆԱ-ն աճել է 4,5 անգամ՝ 5,96 տրիլիոն դոլարից հասնելով 27,4 տրիլիոն դոլարի»[2]:

Երկրի պարենային ինքնաբավության մակարդակը բարձրացնելու համար հատկապես վերջին երեք տասնամյակներին Չինաստանի կառավարությունը մի շարք միջոցներ է ձեռնարկել: Նախ՝ լուրջ ջանքեր են գործադրվել տեղական պարենի արտադրության ծավալներն ավելացնելու և կլիմայի փոփոխության բացասական հետևանքներին դիմակայելու ուղղությամբ: Հատկապես շեշտադրվել է պարենային հացահատիկի ներկրումը տեղական արտադրությամբ փոխարինելու խնդիրը:

Երկրորդ՝ Չինաստանը զգալի ներդրումներ է կատարել գյուղատնտեսական հետազոտությունների զարգացման ոլորտում, ինչը նպաստել է երաշտադիմացկուն, հիվանդությունների և վնասատուների դեմ կենսունակ սորտերի բուծմանը, առավել խնայողական և բարձր արտադրողականությամբ գյուղատնտեսական մեքենաների, դրոնների միջոցով ցանքատարածությունների մշտադիտարկմանը, քիմիական պայքարի ու սնուցման համատարած միջոցառումների իրականացմանը: Հատկապես լուրջ ուշադրություն է դարձվել արհեստական բանականության զարգացման ու թվայնացման հարցերին:

Երրորդ՝ Չինաստանը բախվում է շրջակա միջավայրի չափազանց շատ աղտոտվածության, հողային և ջրային ռեսուրսների սահմանափակության խնդիրներին: Երկրում ապրում է աշխարհի բնակչության գրեթե մեկ հինգերորդը, բայց վարելահողերի տարածքը կազմում է միայն 7%: Որպես սակավահողության հիմնախնդրի լուծման արդյունավետ միջոց՝ վերջին տարիներին զարգանում է ուղղահայաց գյուղատնտեսությունը: Դրա հետ մեկտեղ, Չինաստանը թեև դասվում է քաղցրահամ ջրային ռեսուրսներով հարուստ երկրների շարքին, սակայն այստեղ ամենախնդրահարույցը, աշխարհագրական առումով, ջրի անհավասար բաշխվածությունն է[3]:

Որպես պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացման կարևոր միջոց՝ երկրում համազգային արշավներ են ծավալվել սննդամթերքի թափոնները նվազեցնելու, առողջ ապրելակերպ ու չափավոր սնման մշակույթ ձևավորելու համար:

Չինաստանի գյուղատնտեսական արտադրության և պարենային անվտանգության ամենամեծ մարտահրավերներից մեկը կլիմայի փոփոխությունն է: Վերջին տարիներին կլիմայական ցնցումները (ջրհեղեղներ և երաշտներ) դարձել են ավելի ինտենսիվ և հաճախակի՝ բացասաբար ազդելով երկրի գյուղատնտեսական արտադրության վրա: Այդ երևույթները կանխարգելելու նպատակով երկրում աստիճանաբար ավելացել են շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված ներդրումները: Եթե 6-րդ հնգամյա պլանի (1980–1985) բարեփոխումների արշալույսին շրջակա մի-

[1] Население Китая, https://www.tadviser.ru/index.php/D0%B0.
[2] https://fortune.com/longform/global-gdp-growth-100-trillion-2022-inflation-china-worlds-largest-economy-2030/
[3] Папцов А.Г. Глобальная продовольственная безопасность в условиях климатических изменений : монография / А.Г. Папцов, Н.А. Шеламова. М.: РАН. 2018. 132.

ջավայրի ոլորտում ներդրումները կազմում էին Չինաստանի ՀՆԱ ընդամենը 0,5%-ը, ապա 12-րդ հնգամյա պլանով դրանք ավելացել էին մինչև ՀՆԱ 1,5%-ը: Դեռևս 11-րդ հնգամյա ծրագրում (2006–2010) ՉԺՀ իշխանությունները գերակա ուղղություններ էին հռչակել միավոր տարածության հաշվով ջրի սպառման կրճատումը, հողի ռացիոնալ օգտագործումը, թափոնների վերամշակումն ու հումքի խնայողությունը: 12-րդ հնգամյա պլանը (2011–2015) նախատեսում էր հետագայում ինտենսիվ կերպով նվազեցնել ածխաթթու գազի արտանետումները, բարելավել խմելու ջրի որակը, զարգացնել շրջանաձև տնտեսությունը, վերականգնվող ռեսուրսների վերամշակումը և խթանել կանաչ սպառման մոդելը: Թեև Չինաստանի ղեկավարությունն արդեն իսկ 2015 թվականին ածխի սպառումը նվազեցնելու հանձնառություն էր ստանձնել, սակայն մինչ օրս դա իրականացնել չի կարողանում, ինչը տրամաբանական է. 21-րդ դարում ևս ածուխը շարունակում է մնալ Չինաստանի էներգետիկ ռեսուրսների «ողնաշարը»: Բավական է նշել, որ մինչև 2028 թվականը ածուխն ապահովելու է երկրում էլեկտրաէներգիայի արտադրության մոտ 70%-ը:

14-րդ հնգամյա պլանը (2021–2025) նույնպես բնութագրվում է «կանաչ» օրակարգի նկատմամբ զգալի շեշտադրումներով: Նախատեսվում է, որ անտառածածկ տարածքը կշարունակի աճել (2021 թ. 23,2%-ից 2025 թ. հասնելով մինչև 24,1%-ի), իսկ ՀՆԱ մեկ միավորի հաշվով էներգիայի սպառումը կնվազի 13,5%-ով[4]:

Վերջին տարիներին երկրի իշխանությունները փորձում են մշակել արդյունավետ կառուցակարգեր՝ վերահսկելու «վնասակար» արտանետումների ծավալը: Իրականացվում է բավական խիստ բնապահպանական քաղաքականություն, որն իր ազդեցությունն է թողնում ոչ միայն խոշոր, միջին և փոքր բիզնեսի, այլև սովորական քաղաքացիների վրա, որոնք պետք է հարմարվեն իշխանությունների պահանջներին (օրինակ՝ Պեկինում անձնական մեքենաների օգտագործումը հնարավոր է միայն շաբաթվա որոշակի օրերին և այլն): Դրա հետ մեկտեղ, 2024 թվականին Չինաստանում էլեկտրամոբիլների տարեկան արտադրությունն առաջին անգամ գերազանցել է 10 միլիոնը՝ իններորդ տարին անընդմեջ երկիրը դարձնելով այս ոլորտի համաշխարհային առաջատարը: Նման հաջողությունը մաքուր տեխնոլոգիաների զարգացման՝ Չինաստանի ավելի լայն ռազմավարության մի մասն է: Բացի ավտոմոբիլային արդյունաբերության ձեռքբերումներից, ըստ Չինաստանի էներգետիկայի պետական վարչության տվյալների, մինչև 2024 թվականի վերջ հողմային էլեկտրակայանների ընդհանուր հզորությունը կհասնի 510 միլիոն կՎտ-ի, իսկ արևային էլեկտրակայաններինը՝ 840 միլիոն կՎտ-ի: Միաժամանակ, և՛ քամու, և՛ արևային էներգիայի օգտագործման գործակիցը գերազանցում է 95%-ը, ինչը համապատասխանում է համաշխարհային լավագույն ցուցանիշներին, իսկ վերականգնվող աղբյուրների տեսակարար կշիռը երկրի էներգետիկ հաշվեկշռում շարունակում է աճել[5]:

Չինաստանը վերականգնվող էներգիայի ամենաարագ աճող շուկան է: Կանխատեսվում է, որ մինչև 2027 թվականը երկիրը կտեղակայի աշխարհում վերականգնվող էներգիայի բոլոր նոր հզորությունների մոտավորապես կեսը: Չինաստանն աշխարհում առաջատարն է էլեկտրամոբիլների քանակով, իսկ ֆոտովոլտային համակարգերի համաշխարհային արտադրության մեջ նրա բաժինը մոտ 80-95% է: Պետությունը ջրածնային էներգիայի առաջատարն է, ինչպես նաև նպատակ ունի առաջատար դիրք գրավելու ատոմային էներգիայի ոլորտում[6]: Մինչև 2060 թվականն ածխածնի չեզոքության հասնելու նպատակը Չինաստանի համար մեծ մարտահրավեր է, որը կպահանջի ամ-

[4] Политика Китая в области охраны окружающей среды;- https://ecodelo.org/v_mire/50316-politika_kitaya_v_oblasti_ohrany_okruzhayushchey_sredy

[5] Экологическая трансформация Китая: ключевые достижения 2024 года; http://russian.people.com.cn/n3/2025/0108/c31516-20263446.htmlПапцов, Н.А. Шеламова. М.: РАН. 2018. 132.

[6] Renewables 2022. Analysis and forecast to 2027 // International Energy Agency. URL: https://iea.blob.core.windows.net/assets/ada7af90-e280-46c4-a577-df2e4fb44254/Renewables2022.pdf

բողջ ազգային տնտեսության վերակառուցում, բայց երկիրն իսկապես զգալի ջանքեր է գործադրում CO_2 արտանետումների համաշխարհային առաջատարից վերածվելու մի երկրի, որը կրճատել է «ածխածնի հետքը» մինչև զրո:

Երկրի արագ արդյունաբերականացումը հանգեցրել է հողում առկա ծանր մետաղների մեծ քանակությանը: Ենթադրվում է, որ գյուղատնտեսության համար պիտանի հողերի մոտ 20%-ը (գրեթե 20 մլն հեկտար) լրջորեն աղտոտված է արդյունաբերական թափոնների, ինտենսիվ ուրբանիզացման և տրանսպորտային միջոցների արտանետումների պատճառով: Վարելահողերի «կարմիր» գիծը 120 միլիոն հեկտար է: Այսինքն՝ երկրի վարելահողերի տարածությունը չպետք է նվազի այս ցուցանիշից, այլապես կմեծանան պարենային անվտանգության ռիսկերը:

Ինչպես նշվեց, լուրջ հիմնախնդիրներ են նաև ջրային ռեսուրսների անհավասարաչափ բաշխվածությունը և դրանց անարդյունավետ օգտագործումը:

2024 թվականի դեկտեմբերի 12-ին Չինաստանը նշեց երկրի հարավից հյուսիս ջուր տեղափոխելու նախագծի առաջին փուլի գործարկման տասնամյակը: Այս ընթացքում լրացուցիչ 121,5 միլիարդ խորանարդ մետր ջուր է մատակարարվել դեպի Չինաստանի չորային հյուսիս, ինչն ավելի քան երկու անգամ գերազանցում է Դեղին գետի տարեկան հոսքը: Ծրագրի շահառուների թվում է մոտ 200 միլիոն մարդ՝ ավելի քան 60 քաղաքում, այդ թվում՝ մայրաքաղաք Պեկինում: Ծրագիրը ոչ միայն ջրով ապահովեց երկրի հյուսիսը, այլև օգնեց լուծել բազմաթիվ բնապահպանական խնդիրներ: Իր ծավալայնությամբ դա կոչվում է «Դարի նախագիծ»: Գաղափարը, որը ծնունդ է առել 1952 թվականին, նախատեսվում է ամբողջապես գործարկել 2050 թվականին՝ ընդամենը մեկ դարում:

Դեռ լիովին չավարտված՝ այս նախագիծն արդեն բազմաթիվ համաշխարհային ռեկորդներ է գրանցել, իսկ առջևում էլ ավելի շատ ձեռքբերումներ են ակնկալվում[7]: Այդուհանդերձ, Չինաստանում դեռևս ավելի քան 300 միլիոն մարդ ջրի պակաս է զգում: Պայմանավորված այն հանգամանքով, որ վերջին տարիներին երկրի մեծ մասում տեղումները նվազել են 6%-ով, իսկ ջրի պակասն ավելացել շուրջ 17%-ով, առկա է 40 միլիարդ խորանարդ մետր ջրի պահանջ: Չինաստանի ջրային ռեսուրսների նախարարության տվյալներով մոտ 203 միլիոն գյուղական և 100 միլիոն քաղաքային բնակիչներ խմելու ջրի կարիք ունեն[8]: Չինացի փորձագետները խոնավության ռեժիմի վատթարացումը բացատրում են կլիմայի գլոբալ փոփոխությամբ և լայնածավալ տնտեսական աճով: Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ գյուղատնտեսության նպատակով օգտագործված ջրի քանակը որոշ չափով նվազել է, որը պայմանավորված է մի կողմից ջրային ռեսուրսների ընդհանուր ծավալի և մյուս կողմից՝ օգտագործված ջրի քանակի նվազմամբ:

Նշված մարտահրավերներով հանդերձ, Չինաստանում բուռն զարգացում է ապրում ագրարային ոլորտը: Պարենային անվտանգության խնդիրներն առաջնային օրակարգում են: Երկրում բնակվում է մոլորակի բնակչության մոտավորապես 20%-ը: Դրա հետ մեկտեղ, Չինաստանին բաժին է ընկնում պարենի համաշխարհային արտադրության մոտ 25%-ը, ինչը թույլ է տալիս խուսափել պարենային սուր ճգնաժամերից: Չինաստանն իրեն ապահովում է ռազմավարական նշանակություն ունեցող հացահատիկային մշակաբույսերի պահանջարկի ավելի քան 90%-ով (բրինձ, ցորեն և այլն): Դեռևս զգալի է միայն սոյայի, եգիպտացորենի և արմավենու յուղի արտադրությունից արտաքին կախվածությունը:

Չինաստանի իշխանությունները միշտ էլ առաջնահերթությունը տվել են սննդամթերքի կայուն և անվտանգ մատակարարմանը: Հացահատիկի բերքը երկար

[7] Китайскому проекту по ликвидации дефицита водных ресурсов исполнилось 10 лет, https://rg.ru/2024/12/15/vodu-pusti-at-s-iuga-na-sever.html

[8] В Китае более 300 млн. человек испытывают нехватку водыhttps://www.meteovesti.ru/news/63370633957-v-kitae-bolee-300-mln.-chelovek-ispytyvayut-nehvatku-vody

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Գյուղատնտեսության նպատակով օգտագործված ջրի ծավալը[9]

Տարիները	Օգտագործված ջրի քանակը, մլրդ խ. մ	Գյուղ. նպատակով օգտ. ջրի քանակը, մլրդ խ. մ	Գյուղ. նպատակով օգտ. ջրի տեսակարար կշիռը, %	Ջրային ռեսուրսների ընդամենը ծավալը, մլրդ խ. մ
2012	613,1	390,3	63,65	2952,9
2013	618,3	392,2	63,42	2795,8
2014	609,5	386,9	63,48	2726,7
2015	610,3	385,2	63,48	2796,3
2016	604	376,8	63,12	3246,6
2017	604,3	376,6	62,38	2876,1
2018	601,6	396,3	62,32	2746,3
2019	602,1	368,2	61,39	2904,1
2020	584,3	361,2	61,16	3160,5
2021	592	364,4	61,56	2963,8
2022	599,8	378,1	60,04	2708,8
2023	590,7	360,6	61,04	2478,0

տարիներ անընդմեջ մնացել է համեմատաբար բարձր մակարդակի վրա: 2024 թվականին մեկ շնչի հաշվով հացահատիկի արտադրությունը հասել է 493 կգ-ի, ինչը շատ ավելի է, քան սահմանված է ըստ միջազգային ստանդարտի[10]: Չինաստանի ազգային պարենային անվտանգության մեկ այլ նախապայման է գյուղատնտեսական մշակովի հողերի «կարմիր գիծը»՝ 1,8 միլիարդ մյու (մոտ 126 միլիոն հեկտար): Իսկ վերջին տարիների ամենամեծ ձեռքբերումը բուսական ծագման հիմնական գյուղատնտեսական արտադրանքների արտադրության կայունությունն է (աղյուսակ 2):

2024 թվականին հավաքելով 706,5 միլիոն տոննա բերք՝ Չինաստանը գրանցեց հացահատիկի արտադրության տպավո-

ՆԿԱՐ 1

Թեյի բերքահավաքը Չինաստանում

[9] Чжан Му, Лю Фей, Олег Репецкий, Ли Яньнань, Чжан Пин; Сравнительный анализ рисков и угроз развития современной экономики сельского хозяйства на примере Китая.

[10] Китай вносит вклад в глобальную продовольственную безопасность; https://russian.cgtn.com/news/2024-10-16/1846467328979668993/index.html

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Գյուղատնտեսության նպատակով օգտագործված ջրի ծավալը[11]

Արտադրանքի անվանումը	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Պարենային	630,5	639,7	660,6	660,4	657,9	663,8	669,5	682,9	682,9	686,5	695,4
Բրինձ	206,3	209,6	212,1	211,1	212,7	212,1	209,6	211,9	212,8	208,5	206,6
Ցորեն	123,6	128,2	132,6	133,2	134,2	131,4	133,6	134,3	136,9	137,7	136,6
Եգիպտացորեն	248,5	249,8	265	263,6	259,1	257,2	260,8	260,7	272,6	277,2	288,8
Ընդեղեն	15,24	15,65	15,13	16,51	18,42	19,2	21,32	22,87	19,66	23,51	23,84
Կարտոֆիլ	28,55	27,99	27,29	27,26	27,99	28,65	28,83	29,87	30,44	29,77	30,14
Բամբակ	6,28	6,3	5,91	5,34	5,65	6,1	5,89	5,91	5,73	5,98	5,62
Բուսական յուղ	33,48	33,72	33,9	34,0	34,75	34,33	34,93	35,86	36,13	36,54	38,64
Շաքար	125,6	120,9	112,2	111,8	113,8	199,4	121,7	120,1	114,5	112,36	115,04
Բանջարեղեն	632	649,5	664,3	674,3	691,9	703,5	721	749,1	775,5	800,0	799,0
Մրգեր	227,5	223	245,3	244,1	252,4	256,9	274	287	300	313	312,96

րիչ ռեկորդ: Դա 1,6 տոկոսով ավելի էր, քան 2023 թվականի ցուցանիշը, երբ համախառն բերքը կազմում էր 695,41 մլն տոննա: Այս աճը հնարավոր էր դարձել ցանքատարածությունների և հացահատիկային հիմնական մշակաբույսերի բերքատվության ավելացման շնորհիվ:

Չինաստանում արտադրվող հիմնական հացահատիկային մշակաբույսերի շարքում հատուկ ուշադրություն է դարձվում բրնձին, ցորենին և եգիպտացորենին: Այսպես՝ 2024 թ. բրնձի արտադրությունն աճել էր մինչև 207,5 մլն տոննա, ինչը 0,5%-ով ավելի էր նախորդ տարվա համեմատ: Իսկ ցորենի արտադրությունն ավելացել էր 2,6 %-ով՝ կազմելով 140,1 մլն տոննա:

Թեև ցորենի տարածքը կրճատվել է 0,2 %-ով և կազմել 23,6 մլն հա, սակայն ավելի բարձր բերքատվությունը նպաստել է համախառն բերքի ավելացմանը: Ինչ վերաբերում է եգիպտացորենին, ապա այս մշակաբույսի համախառն բերքը 2024 թ. կազմել էր 294,92 միլիոն տոննա, որը 2,1 տոկոսով ավելի էր, քան 2023 թ. ցուցանիշը: Ընդ որում, եգիպտացորենի տարածքն

ՆԿԱՐ 2

Ցորենի բերքահավաքը քաղաքամերձ տարածքում

[7] Чжан Му, Лю Фей, Олег Репецкий, Ли Яньнань, Чжан Пин; Сравнительный анализ рисков и угроз развития современной экономики сельского хозяйства на примере Китая.

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Չինաստանի հիմնական անասնաբուծական արտադրանքների համախառն բերքը, 2013-2023 թթ. (մլն տոննա)[12]

Տարի	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Ձու	29,06	29,30	30,46	31,60	30,96	31,28	33,09	34,68	34,09	34,56	35,63
Կաթ	30,01	31,60	31,80	30,64	30,39	30,75	32,01	34,40	36,83	39,32	41,97
Միս	86,33	88,18	87,49	86,28	86,54	86,25	77,59	77,48	89,90	92,27	94,61

աճել էր 1,2 %-ով՝ կազմելով 44,74 մլն հա, ինչը նույնպես նպաստել էր բերքատվության մակարդակի բարձրացմանը[13]:

Վերջին տասնամյակում դինամիկ աճ է ապահովել նաև անասնաբուծական արտադրանքների արտադրությունը (աղյուսակ 3): Այսպես՝ 2023 թվականին երկրում մսի արտադրության ընդհանուր ծավալը 94,61 մլն տոննա էր: Թռչնամսի և ձվի արտադրությամբ Չինաստանը երկար տարիներ անընդմեջ աշխարհում զբաղեցնում է առաջին տեղը: 2023 թվականին ձվի արտադրությունը հասել էր 35,63, իսկ կաթինը՝ 41,97 միլիոն տոննայի: Նույն ժամանակահատվածում մեծ պահանջարկ վայելող խոզի մսի արտադրությունը հասել էր 57,94, իսկ գառան մսինը՝ 5,31 միլիոն տոննայի:

Քանի որ Չինաստանում մեկ շնչին բաժին ընկնող գյուղատնտեսական պիտանի հողը կազմում է համաշխարհային միջինի միայն 43%-ը, ուստի առանց ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման պարենային անվտանգության ապահովումը լրջագույն խնդիր է: Տեղական արտադրության ավելացումն ազդում է տարածաշրջանային և համաշխարհային առևտրային հոսքերի վրա: Սա ակնհայտորեն երևում է կերային հացահատիկի՝ սոյայի և եգիպտացորենի արտաքին առևտրում: Կերային հացահատիկի ներմուծման կրճատումը կարող է նվազագույնի հասցնել սննդամթերքի համաշխարհային շուկայում տատանումների ազդեցությունը: Խոսքը հատկապես վերաբերում է սոյային, որի 88%-ը ներկրվում է Բրազիլիայից, ԱՄՆ-ից և Արգենտինայից: Չնայած Չինաստանը չորրորդն է սոյայի համաշխարհային արտադրության մեջ (20 միլիոն տոննա)՝ այնուամենայնիվ շարունակում է մնալ նաև աշխարհի խոշորագույն ներկրողը (սոյայի համաշխարհային առևտրի ավելի քան 60%-ը): Միաժամանակ, Պեկինը ձգտում է նվազեցնել սոյայի և եգիպտացորենի օգտագործումը կենդանիների կերի մեջ: Այս նկատառումով էլ 2023 թվականին Չինաստանի գյուղատնտեսության և գյուղական գործերի նախարարությունը հայտարարել էր եռամյա պլանի մասին, ըստ որի՝ մինչև 2025 թվականը կենդանիների կերերում սոյայի մասնաբաժինը նախատեսվում էր նվազեցնել մինչև 13%՝ նպատակ ունենալով նաև պակասեցնել կախվածությունը սոյայի ներմուծումից: Ենթադրվում է, որ մինչև 2030 թվականն այս ցուցանիշը կարող է իջնել 12%-ի, ինչի արդյունքում սոյայի ներմուծումը 2022 թ. 91 միլիոն տոննայից կնվազի մինչև 84 միլիոն տոննա[14]:

Իրավիճակը կարող է ստիպել, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները գների անկումից խուսափելու համար ստիպված լինի կրճատել սոյայի արտադրությունը, քանի որ արտադրանքի մոտ կեսն արտահանվում է Չինաստան[15]:

Ներկայումս Չինաստանը գործարկում է «խելացի» գյուղատնտեսության անցնելու հնգամյա պլան, որի նպատակն է մինչև 2028 թվականը ներդնել գյուղատնտեսության վարման այնպիսի մեթոդներ, որոնք թույլ կտան աշխատանքային և նյութատեխնիկական նվազագույն ռեսուրսներով, նորամուծական տեխնոլոգիանե-

[12] Чжан Му, Лю Фей, Олег Репецкий, Ли Яньнань, Чжан Пин; Сравнительный анализ рисков и угроз развития современной экономики сельского хозяйства на примере Китая.

[13] Рекорды китайского сельского хозяйства: зерновое производство в 2024 году, https://grininfo.ru/news/rekordy-kitaysko-go-selskogo-khozyaystva-zernovoe-proizvodstvo-v-2024-godu/

[14] Почему продовольственная безопасность является главным приоритетом Китая. https://www.vietnam.vn/ru/ly-do-khien-an-ninh-luong-thuc-la-uu-tien-hang-dau-cua-trung-quoc

[15] Есть причина, по которой продовольственная безопасность является главным приоритетом Китая. https://www.vietnam.vn/ru/ly-do-khien-an-ninh-luong-thuc-la-uu-tien-hang-dau-cua-trung-quoc

րով և ինքնակառավարվող տեխնիկական միջոցներով հասնել մշակաբույսերի մշակության և նախիրների բուծման ամենաարդյունավետ եղանակների[16]:

Ահավասիկ, 2023 թվականի վերջին Չի նաստանում գործարկվեց աշխարհում առաջին 20-հարկանի «խելացի» բանջարանոցը, որը կառավարվում է արհեստական բանականության ալգորիթմներով: Համալիրը Սիչուան նահանգի Չենդու քաղաքում է: Տարբեր տվիչներ և առաջադեմ տեխնոլոգիաներ օգտագործող հատուկ համակարգը պատասխանատու է շրջակա միջավայրի հիմնական պարամետրերի մշտադիտարկման, վերլուծության և լավարկման համար: Բազմաստիճան ուղղահայաց տնտեսությունը, ավանդական հորիզոնական հողագործության համեմատ, հնարավորություն է տալիս բազմապատիկ ավելացնելու բերքի ծավալն ըստ մեկ քառակուսի մետր տարածքի:

Այսպիսով՝ պարենային անվտանգությունը մշտական առաջնահերթություն է Չինաստանի համար: Այս երկիրը, բացի այն, որ տարեցտարի բարելավում է պարենային ինքնաբավության մակարդակը, նաև պարենային օգնություն է տրամադրում ցածր եկամուտ ունեցող երկրներին: Վերջին երկու տարվա ընթացքում պարենային օգնություն է հատկացվել Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ավելի քան 30 երկրի: Այս կերպ Չինաստանն օգնություն է ցուցաբերել բնական աղետներից տուժած ավելի քան տասը միլիոն մարդու[17]:

Չի կարելի մոռանալ նաև Չինաստանի ցուցաբերած երկարամյա մարդասիրական օգնությունը Հայաստանին՝ հատկապես 2000 թ. ուժեղ երաշտի հետևանքների վերացման ժամանակ և դրանից հետո:

[16] Китай принял пятилетний план перехода на «умное» сельское хозяйство, https://milknews.ru/index/kitaj-umnoe-selskoe-hozyajstvo.html

[17] Китай вносит вклад в глобальную продовольственную безопасность, https://russian.cgtn.com/news/2024-10-16/1846467328979668993/index.html

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Население Китая, https://www.tadviser.ru/index.php/D0%B0
2. This chart shows how China will soar past the U.S. to become the world's largest economy by 2030, https://fortune.com/longform/global-gdp-growth-100-trillion-2022-inflation-china-worlds-largest-economy-2030/
3. Папцов А.Г. Глобальная продовольственная безопасность в условиях климатических изменений : монография / А.Г. Папцов, Н.А. Шеламова. М.: РАН. 2018. 132.
4. Политика Китая в области охраны окружающей среды; https://ecodelo.org/v_mire/50316-politika_kitaya_v_oblasti_ohrany_okruzhayushchey_sredy
5. Экологическая трансформация Китая: ключевые достижения 2024 года; http://russian.people.com.cn/n3/2025/0108/c31516-20263446.html
6. Renewables 2022. Analysis and forecast to 2027 // International Energy Agency. URL: https://iea.blob.core.windows.net/assets/ada7af90-e280-46c4-a577-df2e4fb44254/Renewables2022.pdf
7. Китайскому проекту по ликвидации дефицита водных ресурсов исполнилось 10 лет; https://rg.ru/2024/12/15/vodu-pustiat-s-iuga-na-sever.html
8. В Китае более 300 млн. человек испытывают нехватку воды; https://www.meteovesti.ru/news/63370633957-v-kitae-bolee-300-mln.-chelovek-ispytyvayut-nehvatku-vody
9. Чжан Му, Лю Фей, Олег Репецкий, Ли Яньнань, Чжан Пин. Сравнительный анализ рисков и угроз развития современной экономики сельского хозяйства на примере Китая.
10. Китай вносит вклад в глобальную продовольственную безопасность; https://russian.cgtn.com/news/2024-10-16/1846467328979668993/index.html
11. Рекорды китайского сельского хозяйства: зерновое производство в 2024 году рекорды китайского сельского хозяйства: https://graininfo.ru/news/rekordy-kitayskogo-selskogo-khozyaystva-zernovoe-proizvodstvo-v-2024-godu/
12. Почему продовольственная безопасность является главным приоритетом Китая. https://www.vietnam.vn/ru/ly-do-khien-an-ninh-luong-thuc-la-uu-tien-hang-dau-cua-trung-quoc

13. Есть причина, по которой продовольственная безопасность является главным приоритетом Китая. https://www.vietnam.vn/ru/ly-do-khien-an-ninh-luong-thuc-la-uu-tien-hang-dau-cua-trung-quoc
14. Китай принял пятилетний план перехода на «умное» сельское хозяйство; https://milknews.ru/index/kitaj-umnoe-selskoe-hozyajstvo.html
15. Китай вносит вклад в глобальную продовольственную безопасность https://russian.cgtn.com/news/2024-10-16/1846467328979668993/index.html

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, доктор экономических наук, профессор

АГРАРНАЯ ПОЛИТИКА

ЭКОЛОГИЧЕСКАЯ И ПРОДОВОЛЬСТВЕННАЯ ПОЛИТИКА КИТАЯ В ГОДЫ ВЕЛИКИХ АГРАРНЫХ РЕФОРМ

За последние 30 лет экономика Китая переживает быстрый рост. До 1978 года большинство населения Китая жило за чертой абсолютной бедности. В том же году страна встала на путь реформирования и открытия своей экономики. Особое внимание уделялось принципам рыночной экономики и разнообразию видов экономической деятельности. Для этого китайскому правительству потребовались новые идеологические и философские инструменты, которые позволили бы ему говорить с народом на более доступном и понятном языке. С этой целью руководство страны частично отошло от догм коммунистической идеологии, отдав предпочтение принципам рыночной экономики и свободной конкуренции, а также возродило идеи конфуцианства. В частности, в годы Великих реформ в Китае всеми доступными способами активно продвигались традиционно уважаемые конфуцианские добродетели гражданина, такие как любовь к Родине, служение народу, трудолюбие, стремление к знаниям, взаимопомощь, честность, настойчивость и соблюдение законов. В результате экономика стремительно развивалась, а позиции Китая в мире укреплялись. Все прогнозы указывают на то, что при сохранении текущих темпов развития к 2030 году Китай обгонит США по номинальному ВВП и станет крупнейшей экономикой мира.

В статье представлены беспрецедентные достижения Китая в сельскохозяйственном и экологическом секторах за последние три непростых десятилетия.

Ключевые слова: *Китай, аграрный, экологический, вызовы, достижения, технический прогресс*

Samvel AVETISYAN
Senior Expert at «Amberd» Research Center, ASUE, Doctor of Economic Sciences, Professor

AGRARIAN POLICY

CHINA'S ENVIRONMENTAL AND FOOD POLICY DURING THE YEARS OF THE GREAT AGRARIAN REFORMS

Over the past 30 years, China's economy has experienced rapid growth. Until 1978, the majority of China's population lived below the absolute poverty line. That year, China initiated economic reforms and began opening up its economy. Significant attention was given to the principles of a market economy and the diversification of economic activities. To achieve this, the Chinese government required new ideological and philosophical tools to communicate with the people in a more accessible and understandable manner.

To this end, the country's leadership partially moved away from the rigid dogmas of communist ideology, prioritizing market economy principles and free competition while reviving elements of Confucianism. During the Great Reform years, traditionally respected Confucian virtues were actively promoted through various means. These included patriotism, public service, hard work, a commitment to knowledge, mutual assistance, honesty, perseverance, and adherence to the law. As a result, the economy grew rapidly, and China's global standing strengthened. All forecasts suggest that, at its current pace of development, China will surpass the United States in nominal GDP by 2030, becoming the world's largest economy.

This article highlights China's remarkable achievements in the agricultural and environmental sectors over the past three challenging decades.

Keywords: *China, agrarian, environmental, challenges, achievements, technical progress*